

ա ն ձ ն ա դ ր վ ա գ ն ե ր

Չէ, ես հոգնել եմ, աչքերս փակվում են,
ականջներս արդեն ոչ մի բան չեն լսում,
բերանս արդեն ոչ մի բան չի ասում:
Ինձ թվում է՝ մարմնիս բոլոր մասերն
իրարից անջատ են ապրում:
Մեջս չկա միասնություն: Ես, չէ՞ որ, պիտի
ինձ միասնական մարդ զգամ, իսկ ես ինձ բազմություն եմ զգում:

Ժան-Լյուկ Գոդար, «Խենթ Պյեռո»

Ձեռքեր

Ար-ի պես շրջանաձ-, եղունգիս պես հարթ սեղանի վրա ամպերի պես կախված էին ձեռքեր: Սեղանի կենտրոնը պուճուրիկ սեղանիկի չափ շրջանաձ- անցք ուներ: Ձեռքերը զարդարված էին բազմապիսի ծխախոտներով – կրակվառիչներով, լուցկիներով: Այդ ձեռքերը անհավասար շրջանել էին՝ վերածվելով մուրթ անցքի հաստութարակ շողերի: Մի ձեռք քսվելով սեղանի մակեր-ույթին անհետացավ: Իր հետ տարավ իր ծուխ-կնոջը: Մնացած ծուխ-կանայք թեթ-ակի գիրացան ու թիթեռնիկների պես անվերջ ազատվում էին հարսնյակ-ծխախոտների միջից՝ զգեստներն իրենց նետելով ս-ացած կլորիկ անցքի մեջ, որը ոչ մի կերպ չէր, երբեք չէր լցվում:

Նրանք չէին լսում ընթացող խոսակցությունը, կապկում էին այն, պարում: Հանկարծ նրանցից մեկից սկսեց արյուն չռալ: Ձեռքերը սկսեցին նմանվել ծխի –, ինչպես ծուխը հանգցվող ծխախոտից, անկանոն կերպով անհետացան:

Շրթնաճանապարհորդություն:

Մուրացկանի ձեռքը իմ ու խելքահանիս ձեռքերի եռակցումից հետո մնացած պուճուրիկ անցքի մեջ զբոսնելիս մի ծաղիկ հարմարեցրեց՝ վարսանդը շրջապատող ծաղկաձեռքերով հանդերձ առ ար-: Շուտով ար-ահարվածաղիկը ցրեց իրեն տնկող, տրտում, բայց հեռացած մատների անտանելի հոտը: Կանաչ ծուխ մոխրագույն երկնքի դիմացով: Չհասցնել:

Գնացքի լուսամուտները ծածկված էին ձեռնափերի հետնային – ոչ հետնային մասերով: Եղջերվի քարացած գլխամատների միջով ընթանալ: Ուղղահայաց ռելսերն ի վար՝ հաջորդ կայարանը ՎՆ «Անդալուզյան դատարկաբանություն»՝ ֆլամենկոյի խանդավառ

եղունգներով նվագված աչքեր: Քրքրված: Ձեռագործություն, պուլանտիլիզմ. սարեր,
ծորեր եղնիկատու ծառերից ցած, տեր-ներ, ջանք, ջանք, ջանք, junk...

Ձեռքսեղմում. թույլ, ձիգ, գունավոր, կոպիտ, երկար, ամրակուռ, հիգիենիկ, երազելի,
Էլեկտրահաղորդիչ, շոյանք, թռուցիկ, ֆոնը երկնագույն վարդագույն ֆոնին կրծքից հույլ
կերակրող ձեռքը

Ձեռնտու գնացք

Ծծկեր կին

Թունելանցք դեպի գրո

Ծծկեր մի կին

Դռնճոճ կուպե

Հոգնած ցին

Հեծած

Հանգուցյալ մարդուն

Թափառում էր

Թղթի չլրացված արանքների միջով

ՄԱՁԵՐ

Ժամադրվեց: Օրը նոր սկսվում էր: Չանգել էր, հենց արթնացել էր. հոգու խորքում սիրում էր իր քնաթաթախ ձայնի որակը: Պետքարան: Դուշն արդեն ընդունել է, հայելու վրա է նայում: Նախ աշխատանքի, ապա խելքահանի մոտ: Դռան դեմը կծկվել, հայացքը կարմրել, հառել ոտքերին՝ կոշիկներ խուժելիս: Արագ-արագ ուղղվեց առևանդամի պես, դուռը ծակեց, անցավ, գնաց:

Աշխատանքի:

Այնուհետև՝ խելքահանի մոտ:

Շատ հեռու:

Դուրս եկավ, խելքը՝ տեղն էր: Նայեց աչ ու ձախ, վեր, ունքերը հոգնած ընկան տեղը: Հորիզոնը շատ հեռու էր լեռ, բլուր չկար՝ հարթ էր: Հորիզոնը ծիածանագույն էր, դիմացը փռված տարածքը, որտեղ փոքրիկ տնակ կար, իսկ քիչ հեռու՝ մեքենան իր տիրոջ հետ, ստվերի մեջ էին: Օձի պես բարակ ճանապարհը աղքատ էր շարժիչավորներով: Նա ներդրեց իր լուման, սլացավ դեպի հորիզոն-ծիածանը: Ուժեղ քամի սկսվեց: Երկինքը ս-ացավ, մեքենան սուրաց լի պանդոկի միջով: Սա այն պահերից էր, երբ նա ժամանակավորապես ֆորմատավորում էր իր միտքը: Քշվում էր լավ: Արագություն սիրում էր, իսկ քամին աչ կողքից էր ուժգին փչում, փչում ուժգին, հանգստում ռոմանտիկ ծիածանը մոմե հորիզոնում:

ԿՈՃ

Սիրուն աղջիկ:

Ականջի մեջ բառերն ինչպես սպասասրահում

Ես երկար նայում էի:

Նա մատները կոխեց բերանը, ու դրանք էլ երբեք չտեսա:

Մի ուրիշ աղջիկ ավելի սիրուն էր: Նա ուներ ընդամենը երկու կոճ: Ներսի մասից կոճեր
չկային: Նա սղոցել էր ներսի մասի կոճերը, որպեսզի ծնկներն իրար գան, – ոտների
ծռությունը չեր–ա:

Պուերտո Ռիկոյից:

Տասներեք տարեկան աղջիկ: Նրա ձախ կոճի վրա նկատեցի դաջված պտուկ: Նրա
կուրծքը նոր-նոր սկսում էր հասնել կոճի չափերին:

ՏՐՈՄԲ

Օրը խցկվել է ժամացույցների մեջ: Քամին սանրում է օրը, օրերը թափվում են մազերի պես, օրը սանրում է ժամի խազերը: Սանրում են, ու ոչինչ չի ջնջվում: Քայլ: Մայլ:

Չիջնջվումն ու ծերուկը մի առավոտ արթնացան, հիշեցին ու ծանր-ծանր դուրս եկան, տրորելով աստիճանները՝ ճամփա ընկան, դեպի ար-ելք:

Չարթուցիչ: Երկիրը նոր-նոր բխկում է իր աչքը: Անձր-ի տակ մնացել ողջ գիշեր:

Այս անձնավորությունը չոր է: Առա ջին գործը արթնանալ չուզենալը, երկրորդը՝ լուսամուտին նայելը: Դժբախտ օրիորդը, որ այլ տեղ մնալու վտանգն զգացել էր արդեն, դեռ քնած է, երրորդ հերթին՝ նրան, –ս հայացք: Համբուրեց փքվող, թսկելիս նեխահոտածություն թաքցնող շուրթերը ու փորձեց արթնացնել, շտապ վեր կացավ, փորձեց ժիմ անել՝ տապալվեց, սողաց զուգարան, դուռը փակեց հետ-ից: ...տեղը բերեց ինչն ինչոց է. ջուրը քաշեց, լվացվեց, աչքի ոսպնյակի բորբոքում, քայքայում, տանը կմնա, այսօր, խնդրեց փոխանցեմ: Գործի է: Րծի չէ: Մեկ, երկու, երեք, հինգ ու կես հոգի կա, որ կզնդակահարեր, ձեռքը չի գնում, համոզմունքների, սկզբունքների աղճատում, թարախակալում... ոտքը չի գնում... Իսկ եթե *Նրա՞նք* գան: Ոտքը չի գնա: Նրանք կմոտենան ավելի, ոտքը... ա վ ե լ ի, ձեռքը... վրաերթ կանեն:

...Ծեծկռտուք-մեծկռտուք-զ-սկռտուք:

Նա իր սիրունիկ կույսի ամենօրյա սրտաճմլիկ ծիսակատարություն դարձած հեշտամուկ կրթերի գայթակղիչ գրգռմանը –ս անտարբեր: զզվե՛լ

ՇՈՒՆՉ

Այստեղ, բաժակի մոտ, ես՝ ծխախոտ, նա՝ լուցկի: Կամ մոխրաման:
Նյարդայնացած ծուխը հոգու հատակագիծ է կեղծում. անվճար ռենտգեն: Շունչս
տպվել բաժակին, ինձ հետ շնչում է՝ իբր- թոքեր: Շրջվում եմ, – ցած է ճյուղավոր
աշտանակն ընկնում: Մութ:

Այգու մուգ մանուշակագույն անշարժության – մեռյալ խաղաղության մեջ
քամին քշում է. կցվել մեռած տեր-ներին: Օդապարուկ

ՆՅԱՐԴԵՐ

Հյուրանոցի բակում, նստած սեղանի մոտ, ծակվե՞լ, թե՞ չծակվել, ծխախոտը չի
օգնում, ակոհոլից ակերգիա, ինքնասպանության միտքը չի հղանում

ԱՉՔ

աչք

ՁԱՅՆ

Նյաձ